ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ Ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Մ.Ադամյան 1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀՖՆ ՇՀԱՇՁԲ 14-11/3-1 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2014թ-ի մարտի 26-ին կնքված պայմանագրում 2014թ-ի հոկտեմբերի 10-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ 1: առաջացել է պայմանագրով նախատեսված ապրանքների լրացուցիչ քանակի գնման անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն: փոփոխությամբ նախատեսվել է տպագրական աշխատանքների լրացուցիչ քանակի ձեռքբերում:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 10/02/11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 71-րդ կետի 2-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Արմինե Աղաջանյանին:

Հեռախոս՝ 060-700-230:

Էլ. փոստ՝ gnumner@customs.am:

Պատվիրատու՝ՀՀ Ֆինանսների նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

26.03.2014 թվականին կնքված N ՀՀՖՆ ՇՀԱՇՁԲ 14-11/3-1 պայմանագրի

ք. Երևան 10/10 **2014թ.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Արզումանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և <<ՀՀ ՖՆ Ուսումնական կենտրոն>> ՊՈԱԿ-ը, ի դեմս ընկերության տնօրեն Մ.Սահակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև Կողմեր, հիմք ընդունելովԿողմերի միջև 26.03.14թ. կնքված N ՀՀՖՆ ՇՀԱՇՁԲ 14-11/3-1 պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.3 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1. Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 4.1 կետում <<2 460 000 (երկու միլիոն չորս հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ>> բառերը փոխարինել <<2 952 000 (երկու միլիոն ինը հարյուր հիսուներկու հազար) ՀՀ դրամ>> բառերով:

1.2 Պայմանագրի N 2 հավելվածով հաստատված գնման ժամանակացույցի << II կիսամյակ, քանակը>> և <<Ընդամենը քանակը>> սյունակներում <<200000>> և <<500000>> թվերը փոխարինել համապատասխանաբար <<300000>> և <<600000>> թվերով, իսկ <<Ընդամենը գումարը>> սյունակում <<2460000>> թիվը փոխարինել <<2952000>> թվով:

1.3. Պայմանագրի N 3 հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցի <<4-ին եռամսյակ, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր>> սյունակներում <<2460000>> թիվը փոխարինել <<2952000>> թվով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

Պատվիրատու	**Կատարող**
ՀՀ ֆինանսների նախարարություն	<<ՀՀ ՖՆ Ուսումնական կենտրոն>> ՊՈԱԿ
Ք.Երևան, Մ.Ադամյան 1	Հասցե՝ ք.Երևան, Կոմիտասի 35
ՀՎՀՀ 02629081	<<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 900011017109	ՀՎՀՀ 00107399
Կենտրոնական գանձապետարանի	Հ/Հ 2470102790880000
գործառնական վարչություն	Տնօրեն՝ ________ Մ.Սահակյան
Աշխ.ղեկավար________ Ա.Արզումանյան	(ստորագրություն)
(ստորագրություն)	Կ.Տ.